ԱՂՎԱՆՔԸ VII ԴԱՐԻ ԿԵՍԵՐԻՆ

ԱՐԳԻՇՏԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Աղվանից մարզպանությունը[1], որը բռնի ուժով կազմավորված պետական միավորում էր, երկար կյանք չունեցավ. մարզպանությունը բաժանվեց վարչական մի քանի մասերի: Մասնատման գործընթացն ավելի արագ էր ընթանում մարզպանության Կուրի ձախափնյակում կամ բուն Աղվանքի տարածքում: Դրան նպաստեցին թե՛ ներքին, թե՛ հատկապես արտաքին մի քանի գործոններ: Արտաքին գործոնը հիմնականում պայմանավորված էր դեպի Այսրկովկաս խազարական ավերիչ արշավանքներով և երկու աշխարհակալ տերությունների՝ Պարսկաստանի ու Բյուզանդիայի միջև անընդհատ մղվող պատերազմներով, որոնք փոքր ընդմիջումներով շարունակվեցին մինչև VI դարից VII դարի առաջին երեսնամյակը և այնքան թուլացրեցին երկու պետություններին, որ դրանք ի վիճակի չեղան դիմագրավելու արաբական վտանգին: Իսկ ներքին քաղաքականության առումով Աղվանից մարզպանության հետագա ճակատագրի վրա բացասական մեծ ազդեցություն թողեցին Խոսրով Անուշիրվանի (531–578 թթ.) ձեռնարկված բարեփոխումները՝ սահմանային մարզերը բնակեցնելու և այնտեղ կառավարիչներ նշանակելու ուղղությամբ[2]: Արյաց արքայի կարծիքով՝ նոր ցեղերի վերաբնակեցումը հատկապես Կասպից ծովի առափնյա պաշտպանական կառույցներում, ինչպես նաև հարակից տարածքներում կկասեցնի Կովկասյան լեռնաշղթայից հյուսիս բնակվող ցեղերի առաջխաղացումը դեպի տարածաշրջան, սակայն կրոնով ու լեզվով տարատեսակ բնակչության և վարձկան զինվորների բնակեցումը աստիճանաբար փոխեց մերձկասպյան մարզերի ու Բուն Աղվանքի առանց այն էլ ոչ միատար էթնիկական կազմը: Այդ փոփոխություններն էլ, ինչպես կտեսնենք, ավելի լայն թափ ստացան հատկապես արաբների տարածաշրջանում հաստատվելով:

---

[1] *Աղվանից մարզպանությունը ստեղծվել է 461 թ. [տե՛ս Հ. Սվազյան. Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից – VIII դարը ներառյալ), Երևան, 2006, էջ 202, Ա. Վարդանյան. Աղվանքի պատմաաշխարհագրական քննություն, Երևան, 2013, էջ 154]:*

[2] *Տե՛ս Մովսես Կաղանկատվացի. Պատմություն Աղվանից աշխարհի (այսուհետև՝ Կաղանկատվացի), քննական բնագիրը և ներածությունը Վարագ Առաքելյանի, Երևան, 1983, էջ 172:*

Վերը նշված արտաքին ու ներքին գործոններով պայմանավորված աղվանական վերջին պետական միավորումը՝ մարզպանությունը, VI դարի 90-ական թվականներին այլևս գոյություն չուներ: Այս ամենի հետևանքով Բուն Աղվանքն ու մերձկասպյան մարզերը VII դարը թևակոխեցին տրոհված, էթնիկապես խայտաբղետ բնակչություն ունեցող և սեփական տիրակալներով կառավարվող վարչաքաղաքական միավորումներ, որոնք սկսում են հանդես գալ Գիլան, Լակզ, Լիրան, Շիրվան, Շաքի և այլ անվանումներով[3]:

Տարածաշրջանը VII դարի սկզբներին բզկտվել էր Պարսկաստանի ու Բյուզանդիայի միջև անընդհատ շարունակվող ռազմական մրցակցությունից: Երկու գերտերությունների հակամարտությունը թևակոխել էր իր վերջին փուլը: «Արևելքի առյուծը»[4], ինչպես Խոսրով Բ Փարվեզին (590–628 թթ.) անվանում է Մովսես Կաղանկատվացուն, մի քանի խոշոր ճակատամարտերում գլխապտույտ հաջողությունների հասավ և կործանման եզրին հասցրեց Բյուզանդական հազարամյա կայսրությանը: Վիճակը, սակայն, փոխվում է 622 թ.՝ Հերակլ կայսեր (610–642 թթ.) հայտնի արշավանքով[5]: Ինչպես միշտ, պատերազմական գործողությունների թատերաբեմ է դառնում Աղվանքը, Վիրքը և Հայաստանը: Կայսրը, որ կարողացել էր շոշափելի առավելության հասնել պարսիկների նկատմամբ, 624 թ. մնում է ձմեռելու «... ի կողմանս Աղուանից, Վրաց և Հայոց աշխարհաց»[6]: Երկու կողմերը պատրաստվելով գարնանը սկսվելիք ռազմական գործողություններին՝ սպառնալիքներով փորձում էին իրենց կողմը գրավել տեղական իշխողներին: Կայսրը օգնություն չի ստանում Աղվանքից, քանի որ այդ երկիրն ավելի շատ հակված էր Պարսկաստանի կողմը, և եթե աղվանացիները չէին օգնում բյուզանդացիներին, ապա պետք է կարծել, որ հանդես էին գալիս նրանց դեմ՝ Աղվանքում պարսից արքունիքի կողմից կառավարիչ կարգված Գայշաք իշխանի գլխավորությամբ: Հերակլ կայսրին հաջողվում է մեծամեծ խոստումներով իր կողմը գրավել Հյուսիսային Կովկասում ապրող վաչկատուն՝ խազարական ցեղերին, որը ոչ միայն չարիք դարձավ իր մայրամուտն ապրող պարսկական աշխարհակալության, այլև իրենց վարչաքաղաքական

---

[3] *Հ. Սվազյան. «Աղվանք□ տեղանվան բովանդակային փոփոխությունների և գործածության ոլորտների շուրջ».– ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2008, -2, էջ 262, Ա. Վարդանյան. նշվ. աշխ., էջ 158:*

[4] *Կաղանկատվացի, էջ 146:*

[5] *Տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 13, Բյուզանդական աղբյուրներ, Դ, Թեոփանես Խոստովանող. Թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Բարթիկյանի, Երևան, 1983, էջ 18–37,* A. Stratos. Byzantium in the Seventh Century, Amsterdam, 1968, pp. 139, 362–363.

[6] *Կաղանկատվացի, էջ 132:*

ինքնուրույնությունը կորցրած այսրկովկասցիների համար[7]: Բացի խազարական խաքանին ուղարկվելիք գանձից, կայսրը նաև նրանց էր խոստացել նախկին Բուն Աղվանքի ամբողջ տարածքը. «Ստացաւ հայր իմ զաշխարհս զայսոսիկ երեսին՝ Աղուանից, Լփնաց և Չողաց յիւր սեպհական ժառանգութիւն յաւիտենական»[8]: Տարածքային և նյութական ձեռքբերումներից նաև Պարսկաստանի թուլությունից ոգևորված՝ խազարական հորդան 627 թ. ճեղքեց Ճորա Պահակի ամրությունները՝ ներխուժելով Այսրկովկաս: Առաջին հատվածն իր վրա ընդունեց դեռևս պարսիկներին հավատարիմ մնացած Աղվանքը: Սակայն Խոսրով Բ-ի սպառնալից նամակն ուղղված խազարներին, ազդեցություն է գործում և նրանք հետ են վերադառնում Հյուսիսային Կովկաս: Բայց տարածաշրջանի երկրներին երկար ժամանակ վիճակված չէր զերծ մնալու խազարական ասպատակություններից: Լսելով, որ պարսկական բանակը տանուլ է տվել 627 թ. դեկտեմբերի 12-ի վճռական ճակատամարտը Նինվեի շրջակայքում[9], խազարական 40 հազ. բանակը Ջեբու Խաքանի գլխավորությամբ ներխուժեց Աղվանք:

Մովսես Կաղանկատվացին սարսափելի գույներով է նկարագրում այդ ավերիչ արշավանքները դեպի երկրամաս. «Յամին երեսներորդի ութերորդի, որ ամ էր տագնապի և աղետի սպանման Խոսրովու, եկեալ նոյն ինքն, զոր վերագոյնն ասացաք, որ էր նա Ջեբու-Խաքան, ունելով ընդ իւր և զորդին իւր. և զհամար զօրուն նորա ոչ ոք կարէր արկանել ընդ թուով: Իբրև զգայլս գիշախանձ անամոթացեալս դիմեցին ի վերայ նոցա և անխնայ կոտորեցին անցս և ի փողոցս քաղաքին. և ոչ խնայէր ակն նոցա ի գեղեցկատես, պայծառագեղ, մանկահասակ արուի կամ իգի, և ոչ յանպիտանս և յանօգուտս. և թողուին զհաշմս կամ ծերս, և ոչ գթային կամ գալարեին աղիք նոցա ի խանդաղատանս տղայոց, որք զկոտորեալ մարքն փարէին և դիեին զարիւն ստեանց նոցա իբրև զկաթն: Այլ իբրև զհուր վառեալ յեղեգն՝ մտանէին ընդ դուռն և ելանէին ընդ միւս գործ գազանաց երկրի և թռչնոց երկնից թողեալ ի նմա, ապա տակաւ շարժէին ալիքն ընդդէմ մեր»[10]: Գրավելով Չողի ամրոցը՝ խազարները խորացան դեպի երկրի կենտրոնական շրջանները: Աղվանքի կառավարիչ Գայշաքը փորձեց դիմադրել, սակայն տեսնելով թշնամու բազմամարդությունը, բնակչության և զորքի հետ նահանջեց Պարտավ՝ փորձելով այստեղ դիմադրություն ցույց տալ[11], սակայն ապարդյուն: Բնակչությունը դիմեց փախուստի՝ փորձելով ապաստան գտնել Ար-

---

[7] *Բ. Ուլուբաբյան. Դրվագներ Հայոց արևելից կողմանց պատմության (V–VII դդ.), Երևան, 1981, էջ 208:*

[8] *Կաղանկատվացի, էջ 161:*

[9] *Լ. Ե. Երկերի ժողովածու, Երևան, 1967, էջ 251:*

[10] *Կաղանկատվացի, էջ 134–135:*

[11] *Նույն տեղում:*

ցախում, սակայն դա քչերին հաջողվեց, իսկ կառավարիչ Գայշաքն ապաստան գտավ Պարսկաստանում[12]: Գրավելով Աղվանքը՝ խազարական հորդան շարժվեց Տփղիս: Սակայն քաղաքը գրավել չհաջողվեց, և խազարա-բյուզանդական բանակները նահանջեցին տարբեր ուղղություններով[13]:

628 թ. հեղաշրջման հետևանքով ոչ միայն գահից, այլև կյանքից զրկվեց Սասանյան աշխարհակալ Խոսրով Փարվեզը[14]: Գահ բարձրացած Կավատը հաշտություն խնդրեց, և Հերակլ կայսրը չմերժեց այն[15]: 591 թ. հաշտության պայմանագրով վերականգնվեց պարսկա - բյուզանդական սահմանագիծը, քանի որ Հերակլը չէր ցանկանում Պարսկաստանի ո՛չ թուլացումը, ո՛չ էլ ոչնչացումը[16]: Խաղաղություն հաստատվելուց հետո Աղվանքը նորից ընկավ պարսկական գերիշխանության տակ: Այստեղ հաստատվում է պարսիկ մարզպան, որին Կաղանկատվացին անվանում է Սեմա Վշնասպ[17]: Վերջինիս իշխանությունը տարածվում էր միայն Բուն Աղվանքի վրա, իսկ Կուրի աջափնյակում իշխում էր Միհրանյան տոհմից Վարազ-Գրիգորը, այդ պատճառով էլ Թիֆլիսի գրավումից հետո Հերակլը անցավ Գարդման՝ Վարազ-Գրիգորին քաղկեդոնական ծեսով մկրտելու համար[18]: Այս ակտով կայսրը փորձում էր Կուրի աջափնյակում ունենալ հավատարիմ դաշնակից, ի դեմս ձախափնյակի՝ Բուն Աղվանքի պարսիկ մարզպան Սեմա Վշնասպի:

Այսրկովկասում, մասնավորապես Աղվանքում, սակայն, խաղաղությունը երկար չտևեց: 629 թ. խազարների Ջեբու-Խաքանը, օգտվելով Պարսկաստանում սկսված գահակալական պայքարից, Շաթ որդուն հրամայում է շարժվել դեպի Աղվանք[19]: Եվ ինչպես Մովսես Կաղանկատվացին է նշում, «... թէ ելցեն մեծամեծք, առաջնորդք նոցա աշխարհին ընդ առաջ որդւոյ իմոյ և տացեն ի ձեռս զաշխարհն իւրեանց ինձ ի ծառայութիւն և ընդարձակեացեն զքաղաքս և զամրոցս իւրեանց և զվաճառս առաջի զօրաց իմոց, թողացուցէք և դուք նոցա կեալ

---

[12] *Նույն տեղում, էջ 137:*

[13] *Կարճ ժամանակ անց՝ խազարներին և բյուզանդացիներին, այնուամենայնիվ, հաջողվում է գրավել Տփղիսը (տե՛ս Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 151–152):*

[14] *Խոսրովի սպանության հանգամանքները մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 146–149:*

[15] *Պատմություն Սեբեոսի (այսուհետև՝ Ս ե բ ե ո ս), աշխատասիրությամբ Գ. Արգարյանի, Երևան, 1979, էջ 131:*

[16] A. S t r a t o s. *Նշվ. աշխ., էջ 237:*

[17] *Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 154:*

[18] Е. Т а к а й ш в и л и. Источники грузинских летописей, т. II.– СМОМПК, вып. 28. Тифлис, 1900, с. 128; С. Е р е м я н. Заметки и тексты «Хроники Сумбата».– «Известия Армфана СССР», 1941, № 9, с. 28; *Հ. Ս վ ա զ յ ա ն. Աղվանից աշխարհի պատմություն, էջ 236:*

[19] *Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 151,* Летопись византиица Феофана от Диоклитиана до царей Михаила и сына его Фиофилакта. М., 1890, с. 235–236.

և ծառայել ինձ. ապա եթէ ոչ՝ մի՛ խնայեսցէ ակն ձեր ի նոսա յամենայն հասակ արուի ի հնգետասանամենից ի վեր. և զմատաղատունկս արուացն և զազգն ի-գականացն պահեցէք ինձ և ձեզ ի ծառայութիւն և յաղախնութիւն»[20]:

Շաթը նախ փորձեց Աղվանքը նվաճել խաղաղ ճանապարհով. նա պատգամավորություն ուղարկեց Աղվանքում պարսիկ մարզպան Սեմա Վշնասպի ու 25-ամյա գերությունից Պարսկաստանից նոր վերադարձած Վիրո կաթողիկոսի մոտ: Մարզպանը չի ընդունում Խաքանի որդու առաջարկությունը. «Ով ես, ասէ և ուստի տունդ Աղուանից, զի եղից ես փոխանակ դոցա զանձն իմ ընդ հրամանաւդ ընդ այդուիկ»[21]: Սակայն տեսնելով, որ չի կարողանում դիմադրել թշնամու բանակին՝ խուճապահար փախչում է Պարսկաստան: Մարզպանի փախուստից հետո կաթողիկոսն ընկնում է անելանելի դրության մեջ: Բանագնացները շտապեցնում են նրան, որպեսզի ողջ ժողովրդի անունից հպատակություն հայտնի խազարներին: Տեսնելով, որ այլևս չի կարող ժամանակ շահել՝ Արցախի Կողթ-ագարակ[22] կոչվող վայրից Վիրոն փախչում է Չարաբերդ (Ջրաբերդ) ամրոց: Այստեղ նա հրավիրում է երկրի մեծամեծների ժողով. «զամենայն գլխաւորս, զորդիս թագաւորազանց և մեծաց աշխարհիս, զգաւառապետս, և գիւղապետս, և զերիցունս և զսարկավագունս, և զդպիրս, որք ի ժամուն անդ հանդիպեցան»[23]: Ժողովականները որոշում են ընդունել խազարների գերիշխանությունը: Կաթողիկոսը մի քանի իշխանների հետ, մեծ քանակությամբ ոսկի և թանկարժեք իրեր վերցրած, ներկայանում է Ուտիքի Պարտավ քաղաքից հյուսիս բանակած արքայազն Շաթին[24]: Վերջինս մեծարանքով ընդունում է կաթողիկոսին, նրա խնդրանքով վերադարձնում է գերիներին, Վիրոն էլ Բուն Աղվանքի և Հայոց Արևելից կողմանց ժողովրդի անունից հպատակություն է հայտնում խազարներին[25]: Թեպետ Առան-Աղվանքն ազատվում է խազարական ավերածություններից, սակայն վերջիններս շարժվում են դեպի հարավ՝ Հայաստանի կենտրոնական շրջանները: Ճանապարհին լուր է ստացվում, որ սպանվել է Ջերու Խաքանը, և Շաթը հապշտապ վերադառնում է Հյուսիսային Կովկաս:

Խազարական տիրապետության վերացումից հետո պարսից արքունիքը Աղվանքում մարզպան չի նշանակում, այլ ճանաչում է Վարազ-Գրիգորի իշխա-

---

[20] *Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 153–154:*

[21] *Նույն տեղում:*

[22] *Վ. Առաքելյանը Կողթ-ագարակը համարում է Արցախի Կողթ գավառի գյուղերից մեկը [տե՛ս Մ ո վ ս ե ս Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի. Պատմություն Աղվանից աշխարհի (այսուհետև՝ Մ ո վ ս ե ս Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի), Երևան, 1969, էջ 283, ծան. 153]:*

[23] *Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 157–158:*

[24] *Նույն տեղում, էջ 159:*

[25] *Նույն տեղում, էջ 161–162:*

նական իրավունքները (628–642 թթ.)[26] *և նրան կարգում «զառաջին իշխանն Ա-ղուանից»*[27]*: Կարծում ենք, որ Վարազ-Գրիգորի իշխանությունը տարածվում էր ամբողջ Հայոց Արևելից կողմանց գավառների, նաև Կուրի ձախափնյա՝ նախկին Բուն Աղվանքի մի շարք շրջանների վրա, մասնավորապես այն գավառնե-րի, որոնք հիշատակված են «Աշխարհացոյց»-ում: Իսկ մերձկասպյան մարզերն ապրում էին ինքնուրույն կյանքով՝ օգտվելով այն հանգամանքից, որ Պարս-կաստանն այնքան է թուլացել, որ այլևս ի զորու չէր խառնվելու իրենց ներքին գործերին:*

Պարսկա-բյուզանդական վերջին պատերազմներն (603–628 թթ.) այնքան թուլացրեցին երկու աշխարհակալությունները, որ նրանք ի վիճակի չեղան դի-մադրելու արաբական իրական վտանգին: 630-ական թվականներին առաջա-ցած արաբական խալիֆայությունը լայնածավալ նվաճումներ ձեռնարկեց և շուտով դարձավ աշխարհի հզոր տերություններից մեկը:

Թեպետ Պարսկաստանը կորցրել էր երբեմնի հզորությունը, այնուամենայ-նիվ, Աղվանքում ուներ ինչ-որ ազդեցություն, և որպես Սասանյան տերության հպատակ երկիր նրա զինական ուժերը կանչվեցին Տիզբոն: Աղվանից իշխանա-կան գահը դեռևս չժառանգած՝ Վարազ-Գրիգորի երկրորդ որդի Ջուանշիրն (642–683 թթ.)[28] *աղվանից զինական ուժերով մեկնում է Տիզբոն, ներկայանում վերջին սասանյան Հազկերտ Գ-ին (632–652 թթ.) ու նրա կողմից հաստատվում է «սպարապետն Աղուանից»*[29]*: Կարծում ենք, որ Ջուանշիրը 637 թ. հունվարի 6-ի Քադեսիայի ճակատամարտում կռվել է Հայաստանից մեկնած զինական ու-ժերի կազմում, որի հրամանատարն էր Մուշեղ Մամիկոնյանը՝ «…որդի Դաւթի, զաւրավարն Հայոց…»*[30]*: Այս ճակատամարտում պարսիկները պարտություն են կրում, սպանվում են Մուշեղ Մամիկոնյանը և Սյունյաց Գրիգոր իշխանը: Հայտնի է, որ Ջուանշիրը երեք հազարանոց զորաբանակով մասնակցել է 642 թ.*

---

[26] *Հ. Սվազյան. Աղվանից աշխարհի պատմություն, էջ 238:*

[27] *Կաղանկատվացի, էջ 172:*

[28] *Տե՛ս Հ. Սվազյան. Աղվանից իշխաններ Ջուանշիրի և Վարազ-Տրդատի իշխանության տարեթվերի հարցի շուրջ.– ՀՀ ԳԱԱ □Լրաբեր հասարակական գիտությունների□, 1973, - 11, էջ 112, Ա. Վարդանյան. նշվ. աշխ., էջ 164: Բ. Ուլուբաբյանը կարծում է, որ Ջուանշիրը սկսել է կառավարել 637 թ. (տե՛ս Բ. Ուլուբաբյան. նշվ. աշխ., էջ 240), նշանավոր արևելագետ Կ. Տրևերն էլ նշում է 636 թ. (տե՛ս* К. Тревер. Очерки по истории культуры Кавказской Албании IV в. до н.э – VII в. н. э. М.–Л., 1959, с. 236*):*

[29] *Կաղանկատվացի, էջ 174:*

[30] *Մեբեռոս, էջ 137:*

Նեհավենդի ճակատամարտին[31]*: Հավանական է, որ հենց ինքն էր տարածաշրջանից Պարսկաստան գնացած զորքի հրամանատարը*[32]*:*

642 թ. վերադառնալով Աղվանք՝ Ջուանշիրն իր իշխանության կենտրոնը Գարդմանից տեղափոխում է Պարտավ[33]*, քանի որ թե՛ Կուրի ձախափնյա և թե՛ աջափնյա շրջաններում ավերիչ արշավանքների հետևանքով չէին մնացել ծաղկուն քաղաքներ: Այս ժամանակահատվածում Աղվանից իշխանը ժառանգում է իր հոր՝ Վարազ-Գրիգորի տիրապետության տակ եղած Կուրի ձախափնյա և աջափնյա գավառները. «իւր սահմանս յայնկոյս գերոյն Կուրայ ի Կապիճանն գաւառ»*[34]*:*

Մերձավոր Արևելքում հաստատված արաբները չէին կարող այքաթող անել տարածաշրջանը և հերթական արշավանքի ժամանակ՝ 642–643 թթ., հասնում են Ջուանշիրին ենթակա երկրները. «Եկն զաւրն իսմայելի յԱտրպատական, և բաժանեցման երիս: Առաջ մի յԱրարատ, և առաջ մի ի Սեպհական գնդին կողմանս և յառաջ մի յԱղուանս»[35]*: Արաբների այս արշավանքը կրում էր հետախուզական բնույթ և որևէ լուրջ նշանակություն չունեցավ Առան-Աղվանքի կյանքում: Սակայն որպես հեռատես քաղաքական գործիչ, Ջուանշիրը հասկանում էր, որ հետագայում չի կարող դիմադրել արաբական վտանգին և արտաքին քաղաքականության հետ կապված իր քայլերը համաձայնեցնում էր հայոց սպարապետ Թեոդորոս Ռշտունու հետ՝ սկզբնական շրջանում ընդունելով բյուզանդական կողմնորոշում: Վերջինս, սակայն, զգալով, որ Բյուզանդիան ինչպես միշտ միայն խոստումներ է շռայլում, բայց վտանգի պահին իրեն չի սատարում, մտածում է քաղաքական նոր կողմնորոշման մասին: Եվ Թեոդորոս Ռշտունին, համադրելով ուժերի հարաբերակցությունը, կողմնորոշվում է դեպի խալիֆայություն, 652 թ. մեկնում է Դամասկոս՝ բանակցություններ վարելու Ատրիքի և Վերին Միջագետքի կառավարիչ Մուավիայի հետ: Վերջինս նրան շնորհում է «իշխանութիւն ետ նմա զՀայս և զՎիրս և զԱղուանս և զՍիւնիս, մինչև զԿապկոհ և զՊահակն Ճորայ, և արձակեաց զնա պատուով: Եւ նոր պայման էր եղեալ նմա՝ ածել զերկիրն զայն ի ծառայութիւն»*[36]*: Արաբների այս քայլը խոսում է այն մասին, որ նրանք հասկացել էին՝ տարածաշրջանում իրական ուժը Հայաստանն է: Եվ ինչքան էլ Մովսես Կաղանկատվացին Ջուանշիրին ներկայացնի որպես հզոր ու անկախ ինքնակալ, այնուամենայնիվ, նա Թեոդո-*

---

[31] *Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 176:*
[32] *Ա. Վ ա ր դ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 165:*
[33] *Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 177:*
[34] *Նույն տեղում, էջ 178:*
[35] *Մ ե բ ե ռ ս, էջ 145:*
[36] *Նույն տեղում, էջ 169:*

րոս Ռշտունուց կախյալ վիճակում էր գտնվում և պետք է կատարեր վերջինիս[37] հրամանները՝ հատկապես Ճորա Պահակի պաշտպանության գործում:

Բյուզանդական կայսր Կոստանդ Բ-ն (641–668 թթ.), որը չէր ցանկանում տարածաշրջանում զիջել իր դիրքերը, ունենալով Ներսես III Տայեցի կաթողիկոսի և հայ բյուզանդասեր նախարարների օժանդակությունը՝ 652 թ. աշնանը[38] արշավում է Հայաստան: Հաստատվելով Դվինի կաթողիկոսական պալատում՝ կայսրը զորքեր ուղարկեց ոչ միայն նվաճելու Հայաստանի գավառները, այլև Աղվանքը և Վիրքը[39]: Դեպքերի նման զարգացումից անհանգստացած՝ Ջուանշիրը որպես Աղվանքի կառավարիչ ներկայանում է կայսրին: Մովսես Կաղանկատվացին նշում է, որ Ջուանշիրը կայսրին հանդիպել է «ի Քունգր գիւղ»[40] կոչվող վայրում, որը, ըստ Վ. Առաքելյանի, գտնվում է Մարաստանում, Համադանի մոտ[41]: Բայց հայտնի է, որ Կոստանդ Բ-ն այդ գյուղում չի եղել և որ Քունգր անվանումը հետագայում է հանդիպել Մովսես Կաղանկատվացու աշխատության մեջ: Կարծում ենք, որ Ջուանշիրը բյուզանդական բանակատեղի է ներկայացել Հայաստանի որևէ բնակավայրում, մասնավորապես, Վաղարշապատում[42]: Աղվանքի առաջին իշխանին կայսրը շնորհում է «պռոտոն պատրիկի»[43] կոչում և իրավունք է տալիս «արևելեայցս ամենեցուն արքայաբար առնել տեսչութիւն»[44]: Դրանով իսկ կայսրը Ջուանշիրի իշխանությունը ոչ միայն վերահաստատում է Կուրի աջափնյա և ձախափնյա շրջաններում, այլև նրա տիրապետության տակ է դնում մերձկասպյան մարզերը, նաև՝ Դերբենդի պաշտպանությունը:

Արաբները, որոնք ուշիուշով հետևում էին բյուզանդացիների քայլերին, տեսնելով տարածաշրջանի իշխողների բարիդրացիական վերաբերմունքը նրանց հանդեպ, փոխում են իրենց քաղաքականությունը Մեծ Հայքի, Աղվանքի ու Վիրքի նկատմամբ: 654–655 թթ. ձմռանը[45] արաբական զորաբանակը երկու ուղ-

---

[37] *Նույն տեղում:*

[38] *Ա. Տեր-Ղևոնդյան. Հայաստանը VI–VIII դարերում (արաբական նվաճումներին նախորդող և տիրապետության հաստատման առաջին շրջանում), Երևան, 1996, էջ 68:*

[39] *Սեբեոս, էջ 166:*

[40] *Կաղանկատվացի, էջ 184:*

[41] *Մովսես Կաղանկատվացի, էջ 284, ծան. 180:*

[42] *Մովսես Կաղանկատվացին գրում է, որ Ջուանշիրը կայսրին հանդիպել է երկու անգամ՝ Քունգր գյուղում և Վաղարշապատում: Քունգր գյուղի հանդիպումը ժխտում է նաև նշանավոր հայագետ Ն. Ադոնցը (տե՛ս Քննություն Մովսես Կաղանկատվացու, աշխատասիրել, ծանոթագրել և ներածությունը գրել է Պետրոս Հովհաննիսյանը, Ս. Էջմիածին, 2005, էջ 72):*

[43] *Կաղանկատվացի, էջ 182:*

[44] *Նույն տեղում, էջ 185:*

[45] *Տե՛ս* А. Тер-Гевондян. Армения и арабский халифат. Ереван, 1977, с. 40. *Ուսումնասիրողները միակարծիք չեն արաբների*

դությունով ներխուժում է Հայաստան, Աղվանք և Վիրք: Արաբ զորավար Սալման իբն Ռաբիան գրավում է Արցախը, Ուտիքը, Փայտակարանը, բանակցությունների մեջ մտնում Բայլականի բնակչության հետ՝ խոստանալով նրանց կյանքի ու գույքի ապահովություն: Քաղաքի բնակիչները հպատակվում են, իրենց հերթին խոստանում կանոնավոր վճարել գլխահարկ և հողի հարկը[46]: Արաբների կողմից Պարտավի գրավման առաջին փորձն անհաջողության է մատնվում: Սակայն բնակիչները, տեսնելով հետագա դիմադրության անհնարին լինելը ու հետևելով Բայլական քաղաքի օրինակին, հաշտություն են կնքում արաբների հետ: Հաստատվելով Պարտավում՝ Սալմանը գրավում է Հայոց Արևելից կողմանց մյուս՝ Շակաշեն, Մեծ Կուենք, Ուտի, Մեծ Իրանք, Հարճլանք, Տրի գավառները: Բարդիջ քաղաքի մոտակայքում անցնելով Կուր գետը՝ արաբները արշավում են հյուսիս, գրավում Աղվանքի նախկին մայրաքաղաք Կապաղակը[47], ապա՝ Շաքին, Շիրվանը, Մասքաթը, իրենց ենթարկում մերձկասպյան մի շարք մանր իշխանություններ[48]: Սալմանի բանակին չկարողացան կանգնեցնել նաև Դերբենդի հզոր ամրությունները: Այսպիսով՝ Բուն Աղվանքը և Հայոց Արևելից կողմանց գավառները կարճ ժամանակ ընկնում են արաբների տիրապետության տակ:

Որոշ ժամանակ անց սկսվում է խազարական արշավանքը դեպի Աղվանք: Անցնելով Ճորա Պահակով՝ խազարական բանակը 661 թ.[49] հասնում է Կուր գետին, սակայն դրա ձախ ափին պարտություն է կրում Ջուանշիրի զորքից: Ինչպես Մովսես Կաղանկատվացին է գրում, Ջուանշիրը խազարներին խորհուրդ է տալիս այլևս չխանգարել իր երկրի անդորրը. «Գնա՛, մո՛ւտ ընդ դուռն Չորայ, և մի՛ ևս յաւելուր գալ այսր, զի արգել տէր ղյառնելն քո»[50]:

Չնայած արաբական ու խազարական ավերիչ ասպատակություններին՝ այս ժամանակաշրջանում Աղվանքը պահպանում է իր կիսանկախ վիճակը: Սակայն կարճ ժամանակ անց քաղաքական իրադրությունը ողջ տարածաշրջանում փոխվում է: Օմայան հարստության հիմնադիր Մուավիայի կառավարման

արշավանքի թվականի վերաբերյալ (տե՛ս Ա. Եղիազարյան. Հաբիբ իբն Մասլամայի և Սալման իբն Ռաբիայի արշավանքները Հայաստան և այսրկովկասյան երկրներ.– ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2008, - 2, էջ 69, ծան. 1):

[46] К. Тревер. *Նշվ. աշխ., էջ 265–266, Ա. Եղիազարյան. նշվ. աշխ., էջ 74:*

[47] Баладзори. Книга завоевания стран, пер. П. Жузе. Баку, 1927, с. 13. *Կապաղակը գտնվում է ներկայիս Ադրբեջանի Նուխիի շրջանից հարավ-արևելք, մոտավորապես 50 կմ-ի վրա, այժմյան Կուտկաշենի շրջանում՝ Չուխուր-Կաբալա գյուղի շրջակայքի ավերակների տեղում (տե՛ս Ա. Վարդանյան. նշվ. աշխ., էջ 126):*

[48] Баладзори. *Նշվ. աշխ., էջ 13:*

[49] *Հ. Սվազյան. Աղվանից աշխարհի պատմություն, էջ 346:*

[50] *Կաղանկատվացի, էջ 187:*

ժամանակահատվածում (661–680 թթ.) արաբները նորից սկսում են տեր ու տնօրինություն անել Մերձավոր Արևելքում՝ Բյուզանդիային դուրս մղելով տարածաշրջանից: Զուանշիրը, որ կարողանում էր կողմնորոշվել քաղաքական բարդ պայմաններում, զգալով, որ Բյուզանդիան այլևս չի կարող իրեն նեցուկ դառնալ, ունենալով Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանի (661–685 թթ.)[51] համաձայնությունը, մեծամեծ նվերներով 667 թ. ուղևորվում է Դամասկոս՝ իր հպատակությունը հայտնելով խալիֆ Մուավիային: Վերադարձի ճանապարհին Զուանշիրն Արուճում ներկայանում է Գրիգոր Մամիկոնյանին ու Անաստաս կաթողիկոսին՝ խալիֆի հետ բանակցությունների արդյունքները զեկուցելու համար: Ինչպես նշում է Բ. Ուլուբաբյանը, «Զուանշիրն իրեն զգում էր որպես, հին խոսքով ասած, կողմնակալ հայոց ծայրագավառների վրա»[52]:

671 թ.[53] Զուանշիրը երկրորդ անգամ է գնում «առ բռնակալն հարաւոյ»[54]: Խալիֆ Մուավիան աղվանից իշխանին առաջարկում է իր տիրապետության տակ վերցնել նաև Ատրպատականը, սակայն Զուանշիրը հրաժարվում է՝ խալիֆին խնդրելով թեթևացնել Աղվանքից գանձվող հարկերը[55]:

Այսպիսով, Զուանշիրը, որպես շրջահայաց գործիչ, իր հեռատես քաղաքականության շնորհիվ կարողանում է ոչ միայն սոսկ հարկեր վճարելով պահպանել երկրի ինքնուրույնությունը, այլև, ինչու չէ, ընդարձակել իր տիրապետությունը: Մովսես Կաղանկատվացու վկայությամբ՝ նրա իշխանության սահմանները տարածվում էին «ի սահմանացն Վրաց մինչև ի դրունս Հոնաց՝ միահեծան ճոխութեամբ եղև տէր մինչև ցգետն Երասխ»[56]: Կարծում ենք, Զուանշիրը կարողացավ հասնել նրան, որ իր տիրապետությունը տարածվի գրեթե ամբողջ Առան-Աղվանքի վրա և, ինչպես ճիշտ նկատել է Բ. Ուլուբաբյանը, «Միհրանյանները, ո՛չ էլ նրանցից առաջ և նրանցից հետո հայ Առանշահիկները, նման տիրապետություն չեն ունեցել»[57]:

Հետագա տարիներին թե՛ Առան-Աղվանքը և թե՛ տարածաշրջանը ապրում էին խաղաղ կյանքով, քանի որ 674 թ. սկսված ու արաբների պարտությամբ[58] ավարտված արաբա-բյուզանդական պատերազմը էական որևէ նշանակություն չունեցավ այսրկովկասյան երկրների համար: Սակայն Զուանշիրին վիճակված

---

[51] *Տե՛ս Է. Դանիելյան. Հայաստանի քաղաքական պատմությունը և հայ առաքելական եկեղեցին (VI–VIII դարեր), Երևան, 2000, էջ 226:*

[52] *Բ. Ուլուբաբյան. նշվ. աշխ., էջ 247:*

[53] *Նույն տեղում, էջ 243:*

[54] *Կաղանկատվացի, էջ 196:*

[55] *Նույն տեղում, էջ 198:*

[56] *Նույն տեղում, էջ 183:*

[57] *Բ. Ուլուբաբյան. նշվ. աշխ., էջ 246:*

[58] *Տե՛ս* История Византии, т. II. М., 1967, с. 372.

չէր երկար կառավարել. 683 թ. սեպտեմբերի 13-ին՝ Սուրբ Խաչի տոնի օրը, նա սպանվում է Պարտավի իր դղյակի պարտեզում[59]: Ջուանշիրի մահվամբ Առան-Աղվանքը կորցնում է իր նշանավոր քաղաքական գործչին, որն իր դիվանագիտական ընդունակությունների շնորհիվ մի քանի տասնամյակ կառավարելով՝ կարողացավ թե՛ անհամեմատ ընդարձակել իր տիրույթները և թե՛ վերջիններիս զերծ պահել օտար նվաճողների ավերածություններից:

АГВАНК В СЕРЕДИНЕ VII ВЕКА

АРГИШТИ ВАРДАНЯН

Р е з ю м е

Непрерывные войны между Персией и Византией продолжались в VI в. и 30-х годах VII в. Оба государства были настолько ослаблены войнами, что не могли сопротивляться арабам и хазарам. Это влияло и на принадлежавшие им государства, особенно Агванк. Сначала хазары, затем арабы (в 640 г.) несколько раз вторгались в Агванк и завоевали весь регион в течение короткого периода времени. Благодаря дипломатическим способностям принца Джуаншера Агванк не только смог выйти из этой ситуации с наименьшими потерями, но и расширил свою территорию.

AGHVANK IN THE MIDDLE OF THE 7TH CENTURY

ARGISHTY VARDANYAN

S u m m a r y

Uninterrupted wars between Persia and Byzantium went on in the 6th century and the 30s of the 7th century. Those two states were so weakened by the wars, that were not able to resist against the dangers of the Arabs and the Khazars. Those events influenced on the states (especially Aghvank), which belonged to them. First the Khazars, then the Arabs (in 640) several times raided to Aghvank, conquered the whole region in a short period of time. Thanks to diplomatic abilities of Prince Juanshir of Aghvank, Aran-Aghvank not only could get out of that situation with less losses but also had territorial additives.

[59] *Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 221–224:*